Digitally signed by
GEVORGYAN GEVORG 2210901014
Date: 19.04.2025 02:09:36



**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
03.03.2025 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
*«ՁԱՅՆԱԼԱՐԵՐԸ ՀԵՌԱՑՎԱԾՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ»*
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

| | | |
|---|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՁԱՅՆԱԼԱՐԵՐԸ ՀԵՌԱՑՎԱԾՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | 01003935 |
| 1.3 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Ա.ԱՀԱՐՈՆՅԱՆ 5 թիվ 2 տարածք |
| 1.4 Պետական գրանցման համարը | | 211.171.03116 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2004-12-02 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)010207783 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | ognu1@yahoo.com |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը<br>ԱՆԱՀԻՏ | Ազգանունը<br>ԱՎԵՏԻՍՅԱՆ | Պաշտոնը<br>Նախագահ |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| Ձայնալարերի հեռացման պատճառով հաշմանդամ անձանց հաշվառումը, միավորումը, նրանց սոցիալ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանումը, հասարակական կյանքի և հանրօգուտ աշխատանքային գործունեությանը ներգրավելը, կրթական, մասնագիտական, հայրենասիրական, կուլտուրական մակարդակի բարձրացումն ու ընդլայնումը: | | |
| Հարնրապետության տարածքում ձայնալարերի հեռացման պատճառով հաշմանդամ անձանց հայտնաբերումն ու կազմակերպությանը անդամագրվելը: | | |
| Ձայնալարերի հեռացման պատճառով հաշմանդամ անձանց հաշվառման և նրանց խոսքի հետագա ռեաբիլիտացման գործին աջակցելը: | | |
| Կրթության ու դաստիարակության գործում նրանց ընտանիքներին և կրթության մարմիններին աջակցելը: | | |
| Ձայնալարերի հեռացման պատճառով հաշմանդամ անձանց միավորման տնտեսական ընկերություններում աշխատանքով ապահովելը, նրանց արտադրական մասնագիտական ուսուցման կազմակերպելն ու որակավորման բարձրացնելը, կազմակերպության տնտեսական ընկերություններում աշխատողների ընդհանուր թվաքանակի մեջ հաշմանդամների ոչ քիչ 50 տոկոսի պահպանելը: | | |
| Օրենքով սահմանված կարգով արտադրատարածքային սկզբունքով կազմակերպության մասնաճյուղերի, ուսումնաարտադրական տնտեսական ընկերությունների, մշակույթի և մարզական օջախներ, բնակելի շենքեր, մսուր մանկապարտեզներ, մանկական ճամբարներ և այլ անհրաժեշտ օբյեկտների նախագծումն ու կառուցումը: | | |
| Ձայնալարերի հեռացման պատճառով հաշմանդամ անձանց Կազմակերպության համակարգում երկարամյա աշխատողների բնակ կենցաղային, նյութական պայմանների բարելավելը, առողջարանային բուժման, կուլտուր լուսավորական, մարզական, առողջարանական, գեղարվեստական ինքնագործ խմբերի կազմակերպելը: | | |
| Աշխատանքային և կենցաղային պայմանները բերալավող (թեթևացնող) ձայնաստեղծող սարքերի, նոտբուկ համակարգիչների և բոլոր սարքերի շահագործմանը անհրաժեշտ դետալների ու նյութերի, դեղորայքի ու պրոֆիլակտիկ նյութերի, բժշկական ծառայությունների, սննդամթերքի ու կենցաղային իրեր ձեռք բերելու գործում նրանց աջակցելը: | | |
| Օրենքով սահմանված կարգով Կազմակերպության գործունեությունը լուսաբանող ԶԼՄների ստեղխումը, բնակչության շրջանում հականիկոտինային և հակաալկոհոլային պրոպագանդան: | | |
| Կարող է ստեղծել սոցիալական պաշտպանվածության և նյութական օգնության ֆոնդ ձայնալարերի հեռացման պատճառով հաշմանդամ անձանց, Կազմակերպության համակարգում աշխատած վետերաններին և ծերության կենսաթոշակառուներին աջակցելու նպատակով ու բարեգործական նվիրատվությունների և այլ միջոցների հաշվին Կազմակերպության համակարգում աշխատող կազմակերպության անդամ հանդիսացող անձանց օգնություն ցույց տալու համար: | | |
| Աջակցել լոր բժիշկների, լոգոպետների և բուժսպասարկողների գիտագործնական ուսուցմանը, նրանց տրամադրել վիրահատման ու ռեաբիլիտացիայի նոր տեխնոլոգիաներ, նոր բուժգործիքների և դեղորայքի մասին ինֆորմացիա, մասնագետներին գործուղել արտասահման վերապատրաստման կամ արտասահմանից հրավիրել մասնագետների, կազմակերպել սեմինարներ կանխարգելման թեմաներով: | | |
| Կազմակերպությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված ահլ գործունեություն: | | |
| **4 Հասարակական կազմակերպության՝** | | |
| 4.1 Անդամների թիվը | | 3 |

| | |
|---|---|
| 4.2 Կամավորների թիվը | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 1 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Ջայնաստեղծ սարքեր և պրոթեզներ աջակցող միջոցների տրամադրման, տեղակայման ծառայությունների մատուցում | ք. Երևան և ՀՀ մարզեր | Սոցիալական | Ընթացքի մեջ |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ջայնաստեղծ սարքեր և պրոթեզներ աջակցող միջոցների տրամադրման, տեղակայման ծառայությունների մատուցում | ք. Երևան և ՀՀ մարզեր | Ավարտված | Սոցիալական | Ծրագրի շրջանակում ընգրկված անձանց աջակցող միջոցների տրամադրում |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 43,200,000 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 43,200,000 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 43,200,000 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 43,200,000 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | |
|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | 40,391,790 |

10.2 Գույքը

| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
|---|---|---|
| 1 | | |
| Ընդամենը | | 40,391,790 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | |
|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | 40,391,790 |

11.2 Գույքը

| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
|---|---|---|
| 1 | | |
| Ընդամենը | | 40,391,790 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | Ջայնաստեղծ սարքերի վաճառք | 0 | 0 |
| Ընդամենը | | 0 | |

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________0________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________
ստորագրություն, անունը, ազգանունն

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանունն

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ

audit accounting advisory assurance

“Four A Consulting” CJSC

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

# Անկախ աուդիտորական եզրակացություն

« Ձայնալարերը հեռացվածների միավորում » Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին,

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ձայնալարերը հեռացվածների միավորում» Հասարակական Կազմակերպության 2024թ. գործունեության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը՝ այսուհետև Հաշվետվություն:

Մեր կարծիքով, «Ձայնալարերը հեռացվածների միավորում» Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2024թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար «Հասարակական Կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

## Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար" բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

## Հաշվետվության համար Կազմակերպության Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Կազմակերպության ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները:

Կազմակերպության Ղեկավարությունը պատասխանատու է նշված հաշվետվությունը կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է սխալի կամ խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվություն կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանումը, կիրառումը և պահպանումը:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության Հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ ՝ էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվությունների օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

18 ապրիլի 2025թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/ Աուդիտի ղեկավար

«ՖՈՐ ԷՅ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ» "FOUR A CONSULTING" 00148693

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 19.04.2025 02:09